# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 19.11.2021թ.

Ամփոփագրում նշված պայմանները

կարող են փոփոխված լինել

Հեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

## «ԿԱՆԱՉ» ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

| | | |
|---|---|---|
| **Վարկի արժույթ** | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար |
| **Վարկի գումար** | • **Հաստատուն** տոկոսադրույքով վարկերի դեպքում ՝ 5,000,001- 2,000,000,000 ՀՀ դրամ<br>• **Լողացող** տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 5,000,001- 2,000,000,000 ՀՀ դրամ | • **Հաստատուն** տոկոսադրույքով վարկերի դեպքում ՝ 10,000-1,000,000 ԱՄՆ դոլար<br>• **Լողացող** տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 10,000-1,000,000 ԱՄՆ դոլար |
| ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ: | | |
| **Վարկի ժամկետ** | 1 - 120 ամիս | |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** | • **Հաստատուն** տոկոսադրույքով վարկերի դեպքում ՝ սկսած 9%-ից<br>• **Լողացող** տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ առաջին երեք տարին չփոփոխվող՝ սկսած 9%-ից, այնուհետև լողացող | • **Հաստատուն** տոկոսադրույքով վարկերի դեպքում ՝ սկսած 8%-ից<br>• **Լողացող** տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ առաջին երեք տարին չփոփոխվող՝ սկսած 8%-ից, այնուհետև լողացող |
| **Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճար** | Վարկի գումարի 0-3% վարկի գումարից | |
| **Հաշվի բացման վճար (եթե հաճախորդը Բանկում չունի հաշիվ)** | Համաձայն «Բանկային հաշվի ծառայության սակագների» | |

| | |
|---|---|
| **Հաշվից վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար** | Համաձայն «Բանկային հաշվի ծառայության սակագների» |
| **Վաղաժամկետ մարման տուգանք (պայմանագրով նախատեսված լինելու դեպքում)** | Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդից պահանջելու վճարել տուգանք՝ վաղաժամկետ մարվող գումարի մինչև 5%-ի չափով[1]: |
| **Ժամկետանց պարտավորությունների մարում** | Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Բանկն իրավունք ունի հաշվարկվել տույժ չմարված գումարի 0.13%[2]-ի չափով՝ սկսած ուշացման առաջին օրվանից: |
| **Տրամադրման եղանակ** | Անկանխիկ (հաճախորդի՝ Բանկում բացված հաշվի միջոցով) |
| **Մարման եղանակ** | • Հիմնական գումարի և տոկոսագումարների ամսական հավասարաչափ վճարումներ<br>• Անհատական մարման գրաֆիկ (հաշվի առնելով սեզոնային գործոնները)<br>• Արտոնյալ ժամանակաշրջան՝ մինչև 12 ամիս՝ միայն տոկոսները մարելու հնարավորությամբ: |
| **Ապահովվածություն** | • Անշարժ գույքի գրավ<br>• Հիմնական միջոցների գրավ<br>• Տրանսպորտային միջոցների գրավ<br>• Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ<br>• Դեբիտորական պարտքի իրավունքի գրավ<br>• Երաշխիքներ, երաշխավորություններ<br>• Դրամական միջոցների գրավ<br>• Թանկարժեք մետաղների (իրերի) գրավ<br>• Բաժնեմասի գրավ<br>• Այլ գույք |
| **Վարկ/գրավի արժեք հարաբերության առավելագույն ցուցանիշ** | Գրավի իրացվելի արժեքի 75%-ը |
| **Ապահովագրություն** | Բանկի որոշմամբ կարող է պահանջվել՝<br>• գրավադրված գույքի ապահովագրություն վարկի մնացորդի կամ գույքի շուկայական արժեքի չափով և/կամ<br>• այլ ռիսկերի ապահովագրություն |

[1] EBRD GEFF և EBRD SMEC ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի դեպքում պայմանագրով կարող է սահմանվել սույն պայմանից տարբերվող այլ պայման:

[2] Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

| | |
|---|---|
| **Վարկի նպատակ** | • Էներգախնայողությանը ուղղված կոմերցիոն և արդյունաբերական ներդրումներ<br>• Վերականգնվող էներգիայի աղբյուրներին ուղղված ներդրումներ<br>• Կոմերցիոն, արդյունաբերական և բնակելի շինությունների էներգախնայողությանը ուղղված ներդրումներ<br>• Էներգախնայողության կամ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների, սարքավորումների, նյութերի արտադրությամբ, մատակարարմամբ կամ տեղադրմամբ զբաղվող ընկերությունների ֆինանսավորում<br>• Առաջնային էներգիայի սպառման և $CO_2$ արտանետումների նվազեցմանը ուղղված ներդրումներ<br>• Կլիմայական ադապտացմանն ուղղված ներդրումներ |
| **Վարկառուի նկարագիր** | ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ[3] |
| **Ֆինանսավորման չափ** | Ներդրման համար անհրաժեշտ գումարի մինչը 100%-ի չափով |
| **Դրամաշնորհ** | EBRD SMEC ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի դեպքում – 10% կամ 15%՝ կախված իրականացվող նախագծից:<br><br>Դրամաշնորհը Վարկառուին տրամադրվում է եվրո արժույթով: Դրամաշնորհի չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում *վարկի պայմանագրային գումարից* և *նախագծի ներդրման արժեքից (առանց ԱԱՀ)* նվազագույնը:<br>Դրամաշնորհի հաշվարկման համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: |
| **Վարկի տրամադրման որոշման կայացման ժամկետ** | 1-7 աշխատանքային օր անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ստացման օրվանից, որից հետո առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հաճախորդին |
| **Վարկի տրամադրման ժամկետ** | 1-7 աշխատանքային օր վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում |
| ***Լողացող տոկոսադրույքի հաշվարկման և վերանայման պայմաններն ու կարգը*** | Լողացող տոկոսադրույքը հավասար է հղման տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի գումարին:<br>Հղման տոկոսադրույքը՝<br>Հիմնական ցուցանիշ<br>• ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx ինտերնետային կայքում: |

[3] Վարկառու կարող են հանդիսանալ այն ֆիզիկական անձինք, ովքեր գործունեություն են ծավալում գյուղատնտեսության ոլորտում:

| | |
|---|---|
| | • ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար՝ 6 ամսական ԱՄՆ դոլարով ԼԻԲՈՌ-ի դրույքի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: LIBOR տոկոսադրույքը որոշվում է www.global-rates.com կայքում հրապարակված տվյալների հիման:<br><br>Երկրորդային ցուցանիշ<br>• ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար ՀՀ ԿԲ կողմից սահմանվող միջբանկային ռեպո դրույքը: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ https://www.cba.am ինտերնետային կայքում:<br>• ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար Բանկի որոշմամբ հետևյալ ցուցանիշներից որևէ մեկը՝<br>· Նյու Յորքի Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանվող SOFR տոկոսադրույքը: Հրապարակվում է Նյու Յորքի Ֆեդերալ Ռեզերվի կողմից՝ https://apps.newyorkfed.org/markets/autorates/SOFR ինտերնետային էջում:<br>· ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի (ԱՄՆ կենտրոնական բանկ) կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը, իսկ այն միջակայքով տրված լինելու դեպքում միջակայքի վերին շեմը: Հրապարակվում է Ֆեդերալ ռեզերվի կողմից՝ http://www.federalreserve.gov/fomc/fundsrate.htm ինտերնետային էջում:<br><br>Ֆիքսված կոմպոնենտը՝<br>Որոշվում է սահմանված չփոփոխվող տոկոսադրույքից նվազեցնելով վարկի տրամադրման որոշման կայացման օրվա դրությամբ գործող 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի ցուցանիշը ՀՀ դրամով վարկերի դեպքում, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ 6 ամսական ԱՄՆ դոլարով ԼԻԲՈՌ-ի դրույքի մեծությունը:<br><br>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ՓՈՓՈԽԵԼ ՖԻՔՍՎԱԾ ԿՈՄՊՈՆԵՆՏԸ, ԵԹԵ ԹՈՒՅԼ ԵՆ ՏՐՎԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ, ԳՐԱՎԻ, ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ և ԿԱՄ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԲԱՆԿԻ ՀԱՆԴԵՊ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՒՅՆ ՍԱԿԱԳՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ:<br><br>Տոկոսադրույքի վերանայում՝<br>Տոկոսադրույքը պարտադիր ենթակա է վերանայման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված Հղման տոկոսադրույքի և գործող Հղման տոկոսադրույքի[4] տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետ և ավել: Բանկը տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում: Հղման տոկոսադրույքի մինչև 0,5 տոկոսային կետ փոփոխության դեպքում վարկի տոկոսադրույքը չի վերանայվում: |

[4] Լողացող տոկոսադրույքի առաջին վերանայման ժամանակ, «գործող Հղման տոկոսադրույքի» փոխարեն հիմք է ընդունվում վարկի չփոփոխվող տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի տարբերության ցուցանիշը:

| | |
|---|---|
| | Լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից վերանայվում է տարին 2 անգամ՝ փետրվար 15-ին և օգոստոս 15-ին: Նշված օրերը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշների վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը: Վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:<br>Լողացող տոկոսադրույքների դեպքում անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 3 տոկոսային |
| **Այլ պայմաններ** | Համաձայն «Առևտրային վարկերի տրամադրման պայմանների և սակագներ» փաստաթղթի |

**Ծանոթություն՝**

**1.** Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:

**2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

**3.** Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:

**4. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

**5.** Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Նախքան ֆինանսական վերլուծության իրականացումը՝

Իրավաբանական անձանց/ ԱՁ համար

- Իրավաբանական անձի կանոնադրությունը (բոլոր փոփոխություններով):
- Իրավաբանական անձի/ԱՁ ղեկավարների և հիմնական սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը:
- Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից:
- Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը վարկ ստանալու/լիզինգով հիմնական միջոց ձեռք բերելու վերաբերյալ:

· Իրավաբանական անձի/ԱՁ-ի Շահութահարկի հաշվետվություն կամ Շրջանառության  հարկի հաշվետվություն:
· Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:
· Գրավատուից/երաշխավորից պահանջվող փաստաթղթեր՝
· ֆիզիկական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ,
· իրավաբանական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում՝ ղեկավարների և մասնակիցների անձը հաստատող փաստաթղթեր, կանոնադրությունը բոլոր փոփոխություններով, Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից, ինչպես նաև իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու/երաշխավորություն տալու վերաբերյալ:
· Բանկի համար ընդունելի անկախ գնահատող ընկերությունների կողմից կազմված գրավի առարկայի  գնահատման հաշվետվություններ/ գրավի առարկայի ակտ:
· Մատակարարի (վաճառողի) փոխանցման հաշիվ/ կոմերցիոն առաջարկ:
· Հաճախորդի ֆինանսական վերլուծության իրականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

- Վարկային հայտի հաստատումից հետո՝

· Գրավադրվող գույքի սեփականության հիմքերը:
· Տեղեկանք իրավասու մարմնի կողմից գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ:
· Գրավատու ֆիզիկական անձի ամուսնության/ամուսնալուծության վկայական (առկայության դեպքում), կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթղթերը, մահվան վկայական (առկայության դեպքում):
· Ապահովագրության պահանջի առկայության դեպքում ապահովագրության համապատասխան փաստաթղթերը:

**6.** Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ՝

- գործող եկամտաբեր բիզնեսի առկայություն[5]
- դրական կամ չեզոք վարկային պատմություն
- գործունեության թափանցիկություն
- բավարար եկամուտներ
- սեփականության առկայություն
- գրավի և/կամ երաշխավորության առկայություն

**7.** Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ `

- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ
- հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում
- բացասական վարկային պատմություն
- հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:

**8.** ՎԱՐԿԵՐԸ ՁԱԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ԲԱՆԿԻ ԲԻԶՆԵՍ և ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ: ԲԱՆԿԻ ԲԻԶՆԵՍ և ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՑԱՆԿԻՆ ԿԱՐՈՂ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.inecobank.am:

**9.** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման

[5] Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում բացառության կարգով իրականացվում է նաև սկսնակ բիզնեսի վարկավորում:

վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):

**10.** Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

**11.** Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

**12.** Վարկի ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am, և Բանկի՝ 8-րդ կետում նշված մասնաճյուղերում:

## Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

| **Ծառայություն** | **Սակագին** |
|---|---|
| **Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և էլ. փոստով** | Անվճար |
| **Հաշվի քաղվածքի տրամադրում Փոստով (ամսական)** | 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը |
| **Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում**[6] | • մինչև 1 տարվա վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ<br>• 1 տարուց ավել վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ |

[6] Փոստային առաքման դեպքում լրացուցիչ կգանձվի փոստային առաքման ծախսը:

| | |
|---|---|
| **Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում**<br><br>**(առավելագույնը 3 տարի վաղեմությամբ)** | • Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ[7]<br>• Գործարքների մանրամասների վերաբերյալ[8]- 5,000 ՀՀ դրամ<br>• Վարկերի և այլ ֆինանսավորման գործիքների վերաբերյալ[9]- 5,000 ՀՀ դրամ<br>• Աուդիտորական հարցման պատասխան, վարկերի և այլ ֆինանսավորման գործիքների ապահովության և այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկատվության տրամադրում – 10,000 ՀՀ դրամ |

## Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

---

[7] SWIFT հաղորդագրության պատճենը Ինեկո Օնլայն համակարգի միջոցով տրամադրվում է անվճար:

[8] 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

[9] 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը: